# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շբ. 20 Մայիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

Կիր. 21 Մայիս.– Կարմիր Կիրակէ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան։ Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։

– Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան» հանդիսապետութեամբ Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեանի։

Շբ. 27 Մայիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան։

Կիր. 28 Մայիս.– Տօն Երեւման Ս. Խաչին (351)։ Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան, ընթերցաւ Ս. Կիւրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր, եւ հանդիսապետեց «Անդաստան»ի արարողութեան։

Աւագ Սեղանին վերեւը զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը։ Պատարագիչը եւ քարոզիչն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան։

Շբ. 3 Յունիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արք. Աթաջանեան։

Կիր. 4 Յունիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան։ Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արք. Բարախանեան։

Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան»։ Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան։

Դշ. 7 Յունիս.– Կէսօրէ ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Հոգեշնորհ Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Ձիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ կառուցուած վրանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ։

– Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան Առաւօտեան եւ Գիշերային ժամերգութիւնները։

Եշ. 8 Յունիս.– Համբարձումն Տեառն։ Առաւօտուն, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Համբարձման Լեռ, ուր «Հրաշափառ»ով կատարուեցաւ պաշտօնական մուտք, Սրբավայրէն ներս, եւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան։

Պատրիարք Սրբազան Հայրը, պատարագին սկիզբը ժամանելով, այցելեց Մզկիթի պահապան ներկայացուցիչներուն, եւ ապա՝ նախագահեց Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին (1441) առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանքին»։

Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուեցաւ «Անդաստան»։ Հանդիսապետութեամբ Պատարագիչ Սրբազանին։

Շբ. 10 Յունիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան մատրան մէջ։ Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։

– Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։

Կիր. 11 Յունիս.– Երկրորդ Ծաղկազարդ։ Առաւօտուն ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Ժամերգութեան աւարտին տեղի ունեցաւ «Անդաստան»։ Հանդիսապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

Շբ. 17 Յունիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Տ. Աւետիս Արք. Իփրաճեան։

– Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը։

– Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը։

Կիր. 18 Յունիս.– Հոգեգալուստ։ Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետութեամբ Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեանի։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Պատրիարք Սրբազան Հայրը։ «Որդի Աստուծոյ» երգէն առաջ, իր քարոզին միացուց Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի աղօթքը, ուղղուած Ս. Երրորդութեան երեք անձերուն։ Սպասարկողներն էին Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան եւ Տ. Էմմանուէլ Արք. Աթաջանեան։

– Կէսօրէ ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց դէպի Վերջին Ընթրեաց վերնատունը, ուր կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ։

digitised by A.R.A.R.@

Շբ. 24 Յունիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիր. 25 Յունիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Այսօր, սրբատեղեաց բոլոր խորաններուն վրայ մատուցուած Սուրբ Պատարագներուն մէջ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ առաջին տարելիցին առիթով Ամենայն Հայոց հանգուցեալ Վեհափառ Հայրապետին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի հոգւոյն համար:

Սուրբ Յարութեան Տաճարի մէջ կատարուած հոգեհանգստեան արարողութեան ընթացքին նաեւ յիշատակուեցաւ անունը Ս. Աթոռոյս Միաբանութեան անդամներէն եւ Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Պէյսայտ Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելքոնեանի, անոր մահուան քառասունքին առիթով:

Սուրբ Յարութեան Տաճարէն վանք վերադարձին Միաբանութեան եւ հաւատացեալներուն հոգեւորն հրամցուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ:

Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Բշ. 26 Յունիս.– Ս. Կուսանաց Հռիփսիմեանց: Առաւօտուն ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Աբղ. Պուրնէքեան:

Ուր. 30 Յունիս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Շբ. 1 Յուլիս.– Ս. Գրիգոր Լուսաւորչին Ելն ի Վիրապէն:

– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Աբղ. Աթաջանեան:

– Կէսօրէ ետք, հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը «Կաթողիկէ Եկեղեցւոյ» նախատօնակին եւ ծնրադիր «Տէր Ողորմեա» երգուեցաւ ըստ սովորութեան:

Կիր. 2 Յուլիս.– Տօն Կաթուղիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետութեամբ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան: «Հայր Մեր»էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» վասն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շբ. 8 Յուլիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Կիր. 9 Յուլիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն ու քարոզիչն էր Տ. Աղան Արք. Պալիօզեան Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի թեմին: Ժամարարն էր Առաջնորդին եւ ուխտաւորներու խումբին ընկերացող Տ. Նորայր Քհնյ. Պաքանեան:

Ուր. 14 Յուլիս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շբ. 15 Յուլիս.– Ս. Գրիգոր Լուսաւորչին (Գիւտ Նշխարաց): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Դանիէլեան, Նիւ Եորքէն, իրեն ընկերացող երիտասարդ ուխտաւորներու խումբով:

Կիր. 16 Յուլիս.– Երէկուան Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրէական թաղին մէջ գտնուող եւ մեծ Սուրբին անունը կրող եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն ու քարոզիչն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Աբղ. Պուրնէքեան:

Դշ. 19 Յուլիս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Եշ. 20 Յուլիս.– Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շբ. 22 Յուլիս.– Ս. Տրդատայ թագաւորին մերոյ եւ Աշխէն տիկնոջ եւ Խոսրովիդխտոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Կիր. 23 Յուլիս.– Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Աբղ. Աթաջանեան:

Ուր. 28 Յուլիս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

digitised by A.R.A.R.@

Շբ. 29 Յուլիս.— Երկոտասան Առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն եւ քարոզիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 30 Յուլիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Ուր. 4 Օգոստ.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը:

Շբ. 5 Օգոստ.— Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Աւետիս Աբղ. Իփրաճեան:

— Կէսօրէ ետք Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակին եւ Տեառնեղբայր Յակոբոս Առաքեալի Յիշատակի հանդէսին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը, որ նաեւ կատարեց չորս սարկաւագներու «Քահանայական Կոչման» կարգը:

— Գիշերաւակիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի եւ «Հսկման» կարգերուն, նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 6 Օգոստ.— Վարդավառ (Տօն Այլակերպութեան Տեառն): Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, որ Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց: Ս. Պատարագի ընթացքին «Ողջոյն»էն առաջ, Պատրիարք Սրբազան Հայրը կատարեց չորս սարկաւագներու (Հայկ Գազազեանի, Արման Մինասեանի, Միսաք Յովհաննէսեանի եւ Արմէն Ճունտուրեանի) քահանայական ձեռնադրութեան եւ Օծման խորհուրդը, զանոնք վերակոչելով՝ Տ. Նորայր, Տ. Իսահակ, Տ. Ղեւոնդ, Տ. Խադ:

Բշ. 7 Օգոստ.— Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Աբղ. Զաքարեան: Կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն համայն ննջեցեալներուն համար: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Ուր. 11 Օգոստ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Շբ. 12 Օգոստ.— Թադէոսի Առաքելոյն եւ Սանդխտոյ Կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Քհնյ. Գուզուեան, որ Տ. Մարտիրոս Քհնյ. Ձեւեանի հետ, ղեկավարն էր Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմէն 60 երիտասարդներու ուխտաւորական խումբին:

Կիր. 13 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Մարտիրոս Քհնյ. Ձեւեան: Հանդիսապետ Սրբազան Հայրը կատարեց «Խաղողօրհնէք»ի արարողութիւնը:

Բշ. 14 Օգոստ.— Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը՝ Գեթսեմանիի մեր Տիրամայր Ս. Աստուածածնայ Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շբ. 19 Օգոստ.— Եփեսոսի Ս. Ժողովոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 20 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Ուր. 25 Օգոստ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Շբ. 26 Օգոստ.— Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

— Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Գիշերաւակիզբին նոյն վայրին մէջ պաշտուեցաւ «Եկեսցէի եւ Հսկման» ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 27 Օգոստ.— Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Պատարագիչ Սրբազանը հանդիսապետեց «Անդաստան»ին:

Բշ. 28 Օգոստ.— Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Աբղ. Աթաջանեան:

digitised by A.R.A.R.@

Շբ. 2 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 3 Սեպտ.— Ըստ սովորութեան, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան երաշխաւոր Ս. Աստուածածնի Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Տաճարին Տեսուչը՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Բշ. 4 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Գշ. 5 Սեպտ. Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Պատարագեց Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:

Շբ. 9 Սեպտ.— Ս. Թովմայի Առաքեալին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Բագրատ Արք. Պուրճէքեան:

– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազանը:

Կիր. 10 Սեպտ.— Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը իջաւ Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Իսկ «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան: Կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն 7 Սեպտեմբերին տաճարին ընդհանուր մաքրութեան մասնակցող-ներուն հանգուցեալ հարազատներուն համար, որոնց երկար ցանկը կարդաց տաճարին տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:

Գշ. 12 Սեպտ.— Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Տ. Նորայր Աբղ. Գազազեան:

Դշ. 13 Սեպտ.— Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Տ. Իսահակ Աբղ. Մինասեան:

Եշ. 14 Սեպտ.— Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Տ. Ղեւոնդ Աբղ. Յովհաննիսեան:

Ուր. 15 Սեպտ.— Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Տ. Խադ Աբղ. Ճունտուրեան:

Շբ. 16 Սեպտ.— Նիկիոյ Ս. Ժողովոյն: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց ընծայարանի ուսուցիչը Տ. Բագրատ Արք. Պուրճէքեան:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Բշ. 22 Մայիս.— Նիւ Եօրքի Արքեպիսկոպոս եւ Միջին Արեւմուտքի Կաթոլիկ Բարեսիրական Ընկերութեան նախագահ, հանգուցեալ Գարտինալ Ճան Օ'Քոննորի յիշատակին, Նոթր Տէյմի մատուռին մէջ կատարուած Հոգեհանգստեան պաշտօնին ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի:

Շբ. 27 Մայիս.— Վրաստանի Անկախութեան օրուան առիթով Թէլ Ավիվի մէջ Վրաստանի դեսպանի կազմակերպած հիւրասիրութեան ներկայ եղաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Բագրատ Արք. Պուրճէքեանի:

– Նոյն օրը, Իտալական Հիւպատոսի հրաւէրով կազմակերպուած հիւրասիրութեան մասնակցեցան Տ. Արիս Եպս. Շիրվանեան եւ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Կիր. 11 Յունիս.— Ռուսական Դաշնութեան Ազգային Օրուան առիթով, ռուսական դեսպանի հրաւէրով Հերձլիայի մէջ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի:

Դշ. 14 Յունիս.— Բրիտանիոյ Եղիսաբէթ Բ. Թագուհւոյն ծննդեան տարեդարձին առիթով, Բրիտանիոյ Ընդհանուր Հիւպատոսին կողմէ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի:

Գշ. 4 Յուլիս.— Միացեալ Նահանգաց Անկախութեան 224րդ տարեդարձին առիթով, Միացեալ Նահանգաց Ընդհանուր Հիւպատոսին հրաւէրով կազմակերպուած հիւրասիրութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ամերիկեան Անձնագիր ունեցող Տ. Արիս Եպս. Շիրվանեանի, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի, եւ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի:

Եշ. 13 Յուլիս.— Ֆրանսայի Ազգային Օրուան առիթով, Ֆրանսական Ընդհանուր Հիւպատոսի հրաւէրով կազմակերպուած հիւրասիրութեան (Հիւպատոսարանի շէնքին մէջ) ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Սեւան Եպս. Ղարիպեանի, եւ Համբարձում Վրդ. Քէշիշեանի:

– Նոյն առիթով, Ուրբաթ, 14 Յուլիսին, Պատրիարք Սրբազան Հայրը մասնակցեցաւ Ս. Աննայի տարածքին վրայ տրուած ընդունելութեան,

digitised by A.R.A.R.@

ընկերակցութեամբ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի։

Բշ. 24 Յուլիս.– Պելճիքայի Ազգային օրուան առիթով Պելճիքայի Ընդհանուր Հիւպատոսի կողմէ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի։

Գշ. 1 Օգոստ.– Իսրայէլի Խորհրդարանի Ատենապետ խօսնակ Աբրահամ Պուրկի հրաւէրով Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Համբարձում Վրդ. Քէշիշեանի, ներկայ գտնուեցաւ Իսրայէլի Նորընտիր Նախագահ Մոշէ Քացաւի պաշտօնական ուխտառութեան, եւ ապա տրուած հիւրասիրութեան Քնեսէթի շէնքին եւ շրջափակին մէջ։

– Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի, այցելութիւններ տուաւ Հայ Սկաուտական բանակումներու։ Հ.Մ.Ը.Միութեան սկաուտներու եւ արենուշներու բանակումին Պատրիարք Սրբազան Հայրը այցելութիւն տուաւ Յուլիս 29, Շաբաթ երեկոյին, Լաթրունի Սալէզեան վանքի պուրակին մէջ։

Հ.Ե.Միութեան սկաուտներուն եւ արենուշներուն՝ Օգոստոս 21, Երկուշաբթի երեկոյին, Պէյթ Սահուրի Y.M.C.A.ի անտառակին մէջ։

Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուելով պատրաստուած յայտագիրներուն, գնահատեց զոհողութեամբ ձեռք բերուած արդիւնքները։

Գշ. 22 Օգոստ.– Իսրայէլի Վարչապետ Էհուտ Պարաքի եւ Պաղեստինեան Իշխանութեան Նախագահ Եասըր Արաֆաթի վերադարձին առիթով՝ Միացեալ Նահանգաց Նախագահ Քլինթընի հետ Քէմբ Տէյվիտի մէջ խաղաղութեան խորհրդաժողովէն յետոյ, Յորդանանի Վեհ. Ապտուլլահ թագաւորը, խորհրդակցութեան համար, իր անձնական ինքնաթիռով, նոյն օրուան մէջ այցելութիւն տուաւ Եասըր Արաֆաթին ժամը 12ին Ռամալլայի մէջ, եւ ժամը. 2.30ին Էհուտ Պարաքին Թէլ Ավիվի Զինուորական օդակայանին մէջ։ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Համբարձում Վրդ. Քէշիշեանի, ներկայ եղաւ դիմաւորումի եւ Բարիգալուստի արարողութեան։

– Օգոստ. 14–20 շաբաթուան ընթացքին, Երուսաղէմի մէջ տեղի ունեցաւ Գրադարանապետներու համագումար մը, մասնակցութեամբ Ասիական, Եւրոպական, Ամերիկեան երկիրներու գրադարաններու ներկայացուցիչներու, ներառեալ հայ ներկայացուցիչներուն (Հայաստանէն՝ բժշկական Գրադարանէն, Աննա Շիրինեան եւ Տիգրան Զաքարեան. Գիտութիւններու Ակադեմիայէն՝ Անրիկ Ներսէսեան։ Գալիֆորնիայէն Արտէմ Թանիրեան, Անի Մաթոսեան եւ Սիլվա Մանուկեան)։

Օգոստ. 17, Հինգշաբթի առաւօտեան ժամը 9.30էն մինչեւ յետ միջօրէի ժամը 2, մօտ 70 գրադարանապետներ, ըստ կարգադրուած ժամանակացոյցին, տիկին Սիլվա Մանուկեանի առաջնորդութեամբ այցելեցին Սրբոց Յակոբեանց Տաճարը, Սուրբ Թորոսի մատրան ձեռագրատունը, Սրբոց Թարգմանչաց Վարժարանը, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, Հելէն եւ Եդուարդ Մարտիկեան թանգարանը, ասոր կից հին ցեմարանը, ուր փոխադրուած են հարիւր հազարի մօտ հատորները շէնքի նորոգութեան պատճառով, եւ Գալուստ Կիւլպէնկեան մատենադարանը, ուր այցելուները հիւրասիրուեցան։

Պատրիարք Սրբազան Հայրը մասնակցեցաւ հիւրասիրութեան, խօսեցաւ մատենադարանի կարեւորութեան մասին, անդրադառնալով Քրիստոնէութեան պետական կրօն յայտարարման 1700 ամեակին, Հայ Գիրերու Գիւտին եւ Հայ մշակոյթին։ Գնահատանքով յիշեց Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նպաստը Մատենադարանի եօթանասունամեայ շէնքին նորոգման աշխատանքին։

Սիլվա Մանուկեան աւելի տեղեկութիւններ տուաւ Մատենադարանի վերանորոգման եւ դասաւորման ծրագիրներու մասին։

digitised by A.R.A.R.@